

ԱՋԱՅԻՆՈՒՄԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ*

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

Եթե ուշադրությամբ դիտվի, պիտի տեսնվի թե հայոց վաճառականության զարգացումը և հայ տպարաններու բարդավաճումը գրեթե լծորդված են իրար հետ:

Բոլոր առևտրական այն կենտրոններուն մեջ, ուր հայք կրցած էին կարևոր տեղ մը գրավել իբր վաճառական ու դրամատեր, երբ պայմանները ձեռնառու եղած են, անմիջապես տպարաններ կազմակերպված են՝ վաճառականներու հովանավորությամբ:

Վենետիկի հայ գաղութին առևտրական բարգավաճ վիճակին կալարտինք հայ տպագրության սկզբնավորությունը և բազմաթիվ ուրիշ տպարաններու կազմակերպությունը:

Առանո Ամստերդամի հայ բարեկեցիկ ու հարուստ վաճառականներու պաշտպանության ու օժանդակության հայոց կաթողիկոսներու Հոլանդայի մեջ հիմնված հայ տպարանը այնքան արդյունավոր գործունեություն մը չպիտի ունենար:

Ամստերդամի հայ տպարանը փակեց իր դուռները այն ատեն, երբ հայ վաճառականներն իրենց ոտքին կոկան ունենալն զրկվեցան Հոլանդայի մեջ և Ամստերդամում հաստատված հայ գաղութը կորսնցուց իր երբեմնի մեծ նշանակությունը և կարևորությունը:

Արևմտյան գլխավոր առևտրական կայաններեն անցնելով դեպի արևելք տեսանք, թե առաջին գլխավոր վայրը, ուր հայ տպարանը զարգացավ այնքան անհամեմատ կերպով, արևելքի վա. առականական միակ ու կարևոր կայանը՝ Կ. Պոլսն էր, ուր հաստատված առաջին տպարաններն** շատերուն օժանդակ հանդիսացան վաճառականներ և սեղանավորներ, որոնք հետզհետե Կ. Պոլսո մեջ կարևոր դիրք մը ձևառ կրերեն:

Կ. Պոլսո գաղութին մեջ XVIII դարուն նշանավոր դեր մը կատարած են այս տեսակետով Ակնցիները, որոնք կերևա թե այդ գարուն Կ. Պոլսո մեջ բարգավաճ վիճակի մը հասած էին: Պետք չէ կարծել թե Ակն միայն սեղանավորներու և վաճառականներու հայրենիքը է, այլ իբր միջավայր գերազանցապես ներշնչող

* Այս հոդվածը հանգուցյայ հեղինակի «Տպագրության արվեստը և հայք» ծավալուն անավարտ ուսումնասիրության վերջին՝ XI գլուխն է: Աշխատության ձեռագիրը պահվում է Հայկական ՍՍՏԽ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանում: Նրա առաջին 8 գլուխները հրապարակվել են Թիֆլիսում լույս տեսնող «Արոր» հանդեսում՝ իբրև հավելված, 1913 թվականին, որը հոդվածի ավարտման տարեթիվն է: Հոդվածը տպագրության է պատրաստել բանասեր Մ. Ն. Հակոբյանը, որին պատկանում են նաև աստղանիշներով ցույց տրված ծանոթագրությունները և անկյուղավոր փակագծերի մեջ վերցված հավելումները: Հոդվածը տպագրվում է աննշան կրճատումներով—Խմբ.:

** Կոստանդնուպոլսի տպարանների պատմությանն են նվիրված ուսումնասիրության 192—190 էջերը Ա. Ալպոյաճյանը գտնում է, որ Կ. Պոլսի առաջին տպարանը հիմնել է Երեմիա Չելեպի Քեոմյուրճյանը (1635—1695)՝ 1677 թ.:

րնավայր մը եղած է և ժողովրդական բանաստեղծությունը հոն շատ զարգացած է:

Արևելքի վաճառականական երկրորդ զլխավոր կայանն էր Իզմիր կամ Զմյուռնիա, ուր հայերն ունեին բավական նշանավոր զաղութ մը, որ իր կարգին չէր կրնար անտարբեր մնալ համաշխարհային մտավորական շարժման:

Զմյուռնիա անհիշատակ ժամանակներն սկսյալ կարևոր և վաճառաշահ քաղաք մը եղած է: Հայերն ալ ամենահին ժամանակներն սկսյալ զաղթած են Զմյուռնիա և հոն կարևոր դիրք մը զբաղած են: Այս իրողության վավերական ապացույցն է 1261 մարտ 13-ին Միքայել Պալեոլոգոս կայսեր և Ճենովացիոց միջև կնքված դաշնագրությունը, որուն մեջ Զմյուռնիա կկոչվի «հարուստ և վաճառաշահ քաղաք՝ բանուկ նավահանգիստով»: «Հոն վաճառականության և զաղթականության մեջ հաջողակ հայերու մասին ալ հիշատակություն եղած է»¹:

Գերեզմանաքարեր և Զմյուռնիո հայոց խոսած լեզվին մեջ պահված ինչ ինչ երևույթներ, ցույց կուտան թե Իզմիրի հայերն ուղղակի արևելքեն զաղթած են XI կամ XII դարերուն կամ ավելի առաջ²:

Այս առաջին զաղթականներուն վրա հետո ավելցած է XVII դարուն սկիզբները Շահ Աբասի արշավանքին հետևանք արևելյան զավառներն խույս տվող ստուար հայ զաղութ մը³, որ ամբողջ Փոքր Ասիո քաղաքներուն մեջ մաս-մաս կոտորակվելով եկած հասած է Իզմիր, ուրկե իրենց մեկ մասը անցած է Եվրոպա՝ Իտալիա, Ֆրանսիա և հետևորդ Հոլանդիա, և այդ տեղերուն մեջ զբաղած՝ արևելյան կերպասներու և մանավանդ զաղթաբերքերու և մետաքսի առևտրով:

Եվրոպա հաստատված հայ վաճառականները, մեծ մասամբ Իզմիրի հետ հարաբերության մեջ էին, վասն զի Սուեզի ջրանցքը բացված չլլալով՝ բոլոր Ասիո ներքին մասերեն հավաքված ապրանքները կրերվեին Իզմիրի նավահանգիստը, ուրկե նավեր դրվելով կիսրկվեին Եվրոպա, մասնավորապես Վենետիկ և Ամստերդամ:

Ասիո խորերը ճամբորդող կարավանները կանցներին Հայաստանեն: Այդ կարավանները կառաջնորդվեին շատ անգամ հայերե:

Մասնավորապես Երասխի հովիտը Հնդկական ապրանքներու և Պարսկաստանի արտադրությանց փոխադրության ճանապարհն էր և Զմյուռնիո հայերը, որ ծագմամբ այդ շրջան(ակ)ին կպատկանեին, իրենց հարաբերությունները միշտ առևտրական գործերուն բերմամբ պահպանեցին [այդ] բնազավառին հետ:

Համաշխարհային վաճառականության մեջ Լոնդոն, երբ զբավեց Ամստերդամի տեղը, այնտեղի հայ զաղութը նսեմացավ, բայց Զմյուռնիա պահեց իր առևտրական կարևորությունը և, իբր արտածության կայան, ունեցած նշանակությունը, վասն զի ասիական ապրանքներու արտածության համար ուրիշ քաղաք մը չփայլեցավ: Իրենց առևտրական հարաբերություններուն բերմամբ Զմյուռնիո հայերը արևմտյան լուսավորության հետ շուտով հաղորդակցության մտան և Կ. Պոլսո հետ միաժամանակ մտավորական զարգացման ձեռնարկներ եղան այս քաղաքին մեջ:

¹ Bonaventure F. Slaars.

² «Բյուզանդիոն», 2301 և 2326 և «Արևելք», 4858:

³ 2. Հ ա կ ո թ վ ը դ. Ք ո ս յ ա ն, Հայք ի Զմյուռնիա, հատ. Ա, էջ 31 և Slaars.

Զմյուռնիո հայերուն հարազատ արևելյան ծագումը և արևելքի հետ մշտական հարաբերությունները գաղութը ամբողջությամբ էջմիածնա հետ կապված պահեցին:

Զմյուռնիո մեջ կիլիկյան հայեր չկային, հետևաբար էջմիածնական և կիլիկյան թեմականներու վեճեն ազատ մնաց այս գաղութը, և ամենայն հայոց կաթողիկոսները իրենց հեղինակությունը պահեցին մինչև 1828 թ. այս վիճակին վրա, որ Թուրքիո սահմաններուն մեջ գտնված վերջին տերունի վիճակն է:

Ասիական ցամաքին ամենեն արևմտյան մասին վրա գտնված այս քաղաքը, շարունակ հարաբերության մեջ էր մայր-աթոռին անմիջական մոտը գտնվող քաղաքներու հետ: Նաև սերտ հարաբերության մեջ էր Եվրոպայի զանազան քաղաքներուն մեջ հաստատված հայերուն հետ, և տեսակ մը միջնորդի դեր կկատարեր այս գաղութները զոգելու համար ազգին հետ:

Ամենայն հայոց կաթողիկոսները՝ նկատի առնելով հարաբերության դյուրությունները՝ այդ քաղաքը նստող իրենց ներկայացուցչին՝ Զմյուռնիո տերունի վիճակին առաջնորդին պաշտոն տված էին նաև հսկելու Եվրոպայի հայ գաղութներուն վրա⁴:

Այս պատեհությամբ է, որ հավանորեն Զմյուռնիո առաջնորդ Հովսեփ Ես. 1686-ին՝ Վենետիկ էր, և օժանդակեց ամենայն հայոց կաթողիկոսին կողմն հոն խրված Համադասայան Թադևոս քահանայի, երբ այս վերջինը «Ճաշոցի» տպագրությունը կկատարեր:

Նույն այս հարաբերություններին ներշնչված էր, որ անշուշտ Ոսկանի ժառանգորդները 1676-ին Մարսելիո մեջ «Մաշտոցի» տպագրությունը երբ գաղտնի կատարել ուզեցին, լատին գրաքննության ճիւղաններեն ազատելու համար, իրենց մտքին առաջին անգամ ներկայացող քաղաքը՝ ուր պապերը բացարձակ ազդեցություն չունեին՝ Զմյուռնիան եղավ և այդ անունով հրատարակեցին այդ դիրքը առանց իրապիս հոն տպելու⁵:

Զմյուռնիա որքան ալ իբր առևտրական կայան մը մրցակից մըն էր Կ. Պոլսո հետ, սակայն ինչ որ ալ ըլլար Իզմիրի հայ գաղութը շէր կրնար գերազանցել մայրաքաղաքին հայությանը, որ թե՛ ավելի սովոր էր, թե՛ ավելի ճոխ և ավելի միջոցներ ուներ զարգանալու և առաջադիմելու: Հետևաբար Իզմիր շէր կրնար կանխել Կ. Պոլիսը, որուն հետևորդ հղած է:

⁴ Այս իրողությունը կհաստատվի մի քանի վավերագիրներէ: 1718-ին Աստվածատուր կաթողիկոսի մեկ նամակը ուղղված Վենետիկի հայ վաճառականաց կհաստատեն այս իրողությունը: Կենետիկի մասին (տե՛ս Հ. Հ. վրդ. Տաշյանի Մայր ցուցակ, էջ 1030) և 1782-ին գրված երկու պաշտոնագիրներ որոշապես ցույց կուտան Ամստերդամի հայոց Զմյուռնիո առաջնորդին իրավասության տակ գտնվելու (Տե՛ս հ. Գյուտթհ. Աղայանց, Դիվան Հայոց Պատմության, հատ. Դ, էջ 468—482):

⁵ Տե՛ս Ոսկանի տպարանին բաժինը, ուր մանրամասն թված եմ այն պատճառները, որոնք այս տպագրության կեղծիրը կհաստատեն⁶:

⁶ Ոսկանի գործունեությանն ու նրա տպարանին աշխատության մեջ հատկացված է մի առանձին գլուխ (էջ 113—169): Տե՛ս նաև «Արորի» հավելված, էջ 106—152 (անավարտ)՝ Հետազայում Ա. Ալպոյաճյանը հատուկ հոգվածով հանգես գալով, նորից է հիմնավորել իշայն թեզը, որ «...բացարձակ կերպով կսխալին բոլոր անոնք, որոնք 1676-ին Զմյուռնիո մեջ հայ տպարանի մը գոյությունը կընգունեն» (տե՛ս «Ընդարձակ տարեցույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1930, էջ 294, «Զմյուռնիո առաջին հայ տպագրությունը 1676-ին չէ՞ս հոգվածը»): Զմյուռնիայում 1676 թ. տպարան լինելու փաստն այնքան է տարածված, որ մեծ օրերում էլ համառորեն կրկնվում է:

Զմյուռնիս ալ, իբր երկրորդ նախադուռ մը Ասիո, արևմուտքի անմիջական ազդեցության տակ եղած է և կաթողիկոսությունը՝ Զմյուռնիո մեջ Կ. Պոլսո նման շատ շուտ տարածված է:

XVII դարուն սկիզբը կտեսնենք, թե հայոց առաջնորդը Կարապետ եպ. կաթողիկոսյան հարած էր⁶։ Ուրիշ առաջնորդ մը՝ Հովսեփ արքեպ. Քէօլեյան, որ 1661-են 1695 Զմյուռնիո առաջնորդությունը վարած է և Վենետիկ ալ դացած է 1686-ին, կաթողիկոսյան հարած է և 1696-են 1706 ալ Կ. Պոլսո մեջ, իբր կաթողիկ, մեծ դեր մը կատարած է⁷։ և Ավետիք պատրիարքի պահանջումով բանտարկված է⁸։

Նույնպես կաթողիկ էր Մինաս արքեպ. Ակնցի Փերվազյան (վախճ. 1757 ղեկ. 24), որ 1736-ին իր պաշտոնը թողնելով, Իտալիա անցավ⁹։ 1742—44-ին Զմյուռնիա գտնված է իբր նվիրակ Երուսաղեմի Կոլոտի աշակերտ՝ հայտնի կաթողիկ Սարգիս արքեպ. Սարաֆյան, որ Իզմիրե ուղղակի Վենետիկ անցած է¹⁰։

Ասոնք ամենն ալ ցույց կուտան թե կաթողիկոսյան հուզումներն զերծ չէ կրցած մնալ Զմյուռնիա, միևնույն ատեն կրելով կաթողիկ մտքին ազդեցությունը։ Այդ ներշնչման տակ կբողբոջի մտավորական զարգացումը և Զմյուռնիո մեջ ալ կսկսի շարժում մը։

Այս շարժման նախակարապետ կհանդիսանան 1737-են հետո իրարու հաջորդող Զմյուռնիո նվիրակները, Ղազար վրդ. Ջահեցի¹¹ (1737), Աղեքսանդր արքեպ. Կ. Պոլսեցի Ղարաղաշ¹² (1743—1745), Սահակ եպ. Քեղեցի Ահագին¹³ (1755), Աբրահամ եպ. Աստապատցի¹⁴ (1756—1764), Ղուկաս եպ. Կարնեցի¹⁵ (1764—1780), Սահակ Ահագին (Բ¹⁶, 1784)՝ ամենքն ալ էջմիածնա մեջ դաստիարակված եկեղեցականներ, որոնք մեծ մասամբ Կ. Պոլսո մեջ ալ պաշտոն վարած և թրքահայ կետրոնին մտավորական շարժման մեջ ալ կարևոր դեր մը կատարած են։

6 Տե՛ս Գ. Ս ր վ ա ն ձ ա ն ջ, Թորոս Աղբար, հատ. Բ, էջ 281. Գրիգոր պատրիարք Կե-սարացի, էջմիածնա Մելիսեղեկ Կաթողիկոսին (1593—1628) ուղղած հանդիմանագրին մեջ օրոշական կրսե. «Եւ Պոկնտօշ զԿարապետն՝ որ Հռոմ դարձաւ, և Հռոմ կին կառ, և Եօթն տարի ի հետ այն կնոջն ի Հռոմ կեցաւ, յիմա Եպիսկոպոսութեան հրաման ես տուեր, և Թիրա-յու, և Իզմիրու, և Մանիսայու առաջնորդ ես կացուցեր»։

7 «Հայր ի Զմյուռնիա», հատ. ԱՖ էջ 57. Հ[անդես] Ա[մսօրյա], 1913, էջ 553—554. «Հի-շատակարան Վահան Զարդարյանի», էջ 268, «Կոռնիկ», 1863, էջ 662։

8 Գ ր. վ ր ղ. Գ ա լ ե մ ք ե ա ր յ ա ն, Սարգիս արքեպ. Սարաֆյանի կենսագրություն, էջ 224, Մ. Չ ա մ շ յ ա ն, Պատմություն հայոց, էջ 573, Հ ա կ ո Ր ո ս վ ր ղ. Տ ա շ յ ա ն, Մայր-ցուցակ, էջ 470։

9 Մ. Չ ա մ շ յ ա ն, Պատմություն հայոց, հատ. Գ, էջ 743։

10 Գ ր. վ ր ղ. Գ ա լ ե մ ք ե ա ր յ ա ն, Կենսագրություն Սարգիս արքեպ. Սարաֆյանի, էջ 192։

11 Հետո ամենաին հայոց կաթողիկոս (1738—1751), Կ. Պոլսոյ մէջ երկու գիրք տպած է, ինչպես վերը հիշեցինք։

12 Հետո ամենայն հայոց կաթողիկոս (1753—1755)։

13 Կոլոտի աշակերտ, ընտրված կաթողիկոս (1755), բայց պաշտոն չէ կրցած վարել († 1763 փետ. 22 ի Կարին)։

14 Ծնած է 1710-ին, աշակերտ Յովսեփ Աստուածարան վրդ.-ի Ժսան տարի Կարին և Կ. Պոլիս նվիրակ եղած է։ 1775-ին Տաթևու վանքին վանահայր եղավ։ Մեռած է 1777 Յնվ. 15-ին։

15 Հետո ամենայն հայոց կաթողիկոս (1780—1799 ղեկ. 27+)։

16 Մեռած է 1792-ին։ Առաջ նվիրակ Կ. Պոլսո։

Մասնավորապես XVIII դարուն կեսին սկսյալ Զմյուռնիո մեջ կսկսի կրթական շարժում մը՝ Սյունյանց դպրոցին ոգւով և անոր ներշնչման տակ:

Այսպես, Սահակ եպ. Քեղեցիի պաշտոնավարութեան շրջանին, ժամանակին հմուտ «դասախօս» վարդապետներեն Սիմեոն Երևանցի¹⁷, իբր փոխանորդ, միջոց մը Զմյուռնիա մնացած է¹⁸ (1755):

Ինչպես Կ. Պոլսո, նույնպես նաև Զմյուռնիո մեջ հավանորեն Սիմեոն վրդ. Երևանցի հաստատած է «դասատուն»:

Իրեն հաջորդած է նման պաշտոնով մը Մեսրոպ վրդ. Գանձակեցի (վախճ. 6 մայիս 1762), որուն համար կվկայվի թե էր «ոսփեստ հեղ», «վարժեալ ի գահն լուսակերտակ—զկաթն իմաստից անվրիպակ—Ջամբող մանկանց իբր զղայեակ—ի հաւատոյ անխոտորնակ—վարուք ընտիր ամրաքանդակ—էր սա յերկրեն կոչեալ Գանձակ.....»¹⁹:

Այս նախնական փորձերուն կհաջորդե իրական կրթարան մը որ 1779-ին կբացվի հանուն Ս. Մեսրոպի*, Զմյուռնիո մեջ, Ղուկաս եպ. Կարնեցիի առաջնորդութեան միջոցին, հետևողութեամբ Կ. Պոլսո պատրիարքական վարժարանին: Այս կրթարանը, որուն հետո Հովհան Վանանդեցի քահանան և Անդրեաս Փափազյան այնքան մեծ փայլ պիտի տային, կարևոր դեր մը կատարած է Զմյուռնիո մտավորական շարժման մեջ, նույն քաղաքին հարուստ գաղութին ընձեռած միջոցներովը հասցնելով իրապես զարգացած, իրենց ազգին վիճակին բարելավութեան եռանդով լեցված բազմաթիւ մտավորականներ, որոնք ցույց տված են արտակարգ ջանք ու աշխույժ:

Կրթական և ուսումնական զարգացման այս ջանքերու շարքին բնական է թե չէր կրնար անտեսվիլ նաև տպարանը, որ ինչպես Կ. Պոլսո մեջ առաջին դպրոցներու հետ զուգրնթացաբար կազմակերպված է, նույնպես Իզմիրի մեջ անոր հետ երևան եկած է:

Հազիվ Սիմեոն վրդ. Երևանցի և Մեսրոպ վրդ. Գանձակեցի Զմյուռնիո մեջ կրթական ու ուսումնական գործունեություն մը սկսած էին, [երբ] տպարանին պետքը զգալի եղավ: Այս կարևոր պակասը լրացնելու և տերունի վիճակը, Կ. Պոլսո բոլոր առավելություններովը օժտելու համար կերևա թե Իզմիրի գրասեր առաջնորդը՝ Աբրահամ եպ. Աստապատցի և իր «զհոգեկից և զանխզելի սիրով շաղկապեալ հարազատ եղբայրն»՝ Սիմեոն վրդ. Երևանցի, աշխատած են: Էջմիածնա նվիրակին հովանավորութեան տակ բացված տպարանին վարիչն էր Մահտեսի Մարկոս մականվամբ Բեշիշ կոչված՝ Ազատենց Սարգիս Ապուշեխցիի (Ակն) թոռը, և Սահակի զավակը, որ կամ Ամստեղամի տպարանին կամ XVIII դարուն առաջին կեսին Կ. Պոլսո մեջ գործող տպարաններեն մեկուն աշխատավորներեն էր և հավանորեն Աստապատցի Աբրահամ եպ.-ի կողմէ հրավիրված էր Իզմիր:

Իզմիրի այս անդրանիկ տպարանեն հրատարակված են ընդամենը երեք դիրք:

¹⁷ Հետո կաթողիկոս:

¹⁸ «Դիւան Հայոց պատմութեան», հատ. Դ, էջ 22:

¹⁹ Տե՛ս «Աշխատանք», Իզմիր, Բ. տարի, թ. 104:

Խոսքը Զմյուռնիայի հայտնի Մեսրոպյան վարժարանի մասին է, որը, սակայն, այլ աղբյուրների վկայությամբ, հիմնվել է ոչ թե 1779, այլ 1799 թ. (տե՛ս Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899, հատ. Ա, էջ 118: Պ. Սիմոնյան, Հուշամատյան հայկական, Զմյուռնիա, 1936, էջ 15 և այլն):

1. «Մեկնութիւն ժամակարգութեան» (ավարտ.՝ 1759 հոկտ. 4), հեղինակն է «ոմն բանասեր հայոց» և «լոյս ածեցեալ» է «արդեամբ և ջանիք արանց ոմանց բարեպաշտից. ի փառս Աստուծոյ»։ Բնագիրը տեսած և սրբագրած է Կ. Պոլսո պատրիարքը՝ Նալյան Հակոբ, որ ինչպես տեսանք դարուն դրական ամենեն նշանավոր դեմքերեն մեկն էր։ Իսկ տեղւոյն առաջնորդը՝ Արրահամ եպ. զխաւոր հորդորողն էր այս գործին տպագրութեան տրվելուն։

2. «Խորհրդատետր» (1761 ղեկ. 12—1762 փետր. 12), որ դարձյալ «Արրահամու արդիւնարար և Աստուածիմաստ վարդապետի... յորդորմամբ և կամեցողութեամբն» կտպվի։

3. «Եղնիկ» (1762 Յուլիս 4—1763 մարտ 12), որ նույնպես Արրահամ եպ.-ի «արդեամբ» կտպվի։ Ասոր ալ բնագիրը սրբագրած է Նալյան պատրիարք և ընդարձակ առաջարան մը կցած է իր կողմեն։

Տպարանը հաստատված էր առաջնորդարանին կից և առաջնորդին քաջալերութեամբ և անոր հայթայթած ծախքերովը տպված են բոլոր գործերը, որով էջմիածինը եղած է անուղղակի կերպով հովանավոր ուժը այս տպարանին, որ ինչպես կհասկցվի Մարկոսի խոսքերեն իրեն շատ սուղ արժած է։

Ահա իր բառերը.

«Գրովանդակ կեանս իմ ընդ գոյից իմոց վատնեցի, մինչև շնորհիւ Տեառն զտպագրատանս զայս ի լոյս ածի, յօգուտ և ի պայծառութիւն ազգիս, վասն ի լոյս ածելոյ զգանազան գրեանս Աստուածայինս» և կհայտարարե թե «աւասիկ ի ծառայութեան ձերում ի պատրաստի կամ. զի զոր ինչ առաջադրեցէք ինձ զգրեանս՝ արարից ըստ կամաց ձերոց ՚ի փառս տան Աստծոյ և ՚ի շահ ընթերցասիրաց»։

Առաջնորդեն դատ նյութապես այս տպարանին ձեռնտու եղած է «համեստակենցաղ և խոհեմամիտ» տիրացու Հօհան Սյունեցի «ի Գեղջե աղուանակայ», որդի Գրիգորի, որ «Եղնիկի» տպագրութեան ծախքերուն կեսը հայթայթած է։

Այս տպարանին մեջ աշխատութեան բաժին ունեցած է, Սիմեոն վրդ. Երեանցիեն դատ, նաև Զմյուռնիո կրթական շարժման առաջին գործիչներեն վերոհիշյալ Մեսրոպ Գանձակեցին «առաքինացան և դիտնական վարդապետն», որ «Եղնիկի» օրինակը պատրաստած է տպագրութեան համար և ավարտելն առաջ մեռած է (1762 մայիս 16—), ինչպես կվկայե «Եղնիկի» հիշատակարանը։ Նույնպես Մարկոսի գործակցած են Մահտեսի Սիմոն՝ որդի կեսարացի Մահտեսի Կարապետի, և զմյուռնացի նոտար Մնացական Մարդարյան՝ որոնք գրական աշխատութիւններ կատարած են։ Մահտեսի Մարկոսի տպարանին մեջ գրաշարութիւնը բրած է Սերաստացի հանգուցյալ Սանդրիոսի որդի տիրացու Հովհաննեսն, «որ ի մանկութիւնէ իւրմէ հետեոյ եղիւ արհեստիս», և մրազարկութիւն (մեկան տվող, տպագրող) Թոյեա սեւմանցի Կարապետի որդի Մահտեսի Իգնատիոսն։

Այս աշխատավորները, հովանավորները և բարեկամները, ինչպես կտեսնուի մեծ մասամբ արեւելյան գաւառներու բնիկներ են, և մասնավորապես անոնցմե, որոնք էջմիածնա հետ ուղղակի առնչութիւններ ունին։

Մարկոս, եթե ոչ ծննդամբ զեթ ծագմամբ Ակնցի մըն էր, վասնզի թեև իր և հորը (Սահակի) ծննդավայրը չէ հիշված, սակայն իր մեծ հորը Սարգիսի Ապուլեիցի ըլլալը որոշապես հիշված է։ Եվ ավելորդ է դիտել տալ, թե այդ գարուն մեջ ոչ միայն Կ. Պոլսո, այլ բոլոր Մերձավոր Արեւելքի շրջանակին

մեջ, նշանավոր դեր մը կատարած են Ակնցիք՝ իբր մատենագիր, տպագրիչ, մեկենաս և այլն:

Մարկոս հավանորեն Կոլոտի և Նալյանի վարժարաններուն աշակերտած է, կամ անոր հետ մոտեն կամ հեռվեն հարաբերություն ունեցած է: Միայն անորոշ կմնա թե ինչպես Իզմիր գացած է, և ուրկե կսկսին իր հարաբերությունները Աստապատցիին հետ: Իր գործը, որուն այնքան եռանդով փարած էր, կրնդհատվի դժբախտաբար և 1763-են հետո իր տպարանեն լույս տեսած որևէ գիրք չէ տեսնված: Գիտենք սակայն թե դեռ 1765-ին Իզմիր կգտնվեր: Հավանական է ենթադրել, թե ուրիշ գործեր ալ տպագրած է, որոնք մեզի հասած չեն:

Սակայն ավելի հավանական է ենթադրել²⁰, թե Միմեոն կաթողիկոսի հրամանին շնագանդելով էջմիածին մեկնած չլլալուն համար տեղվույն առաջնորդը իր տպարանը փակած է:

Միմեոն վրդ. Երևանցի 1763-ին ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելով, կաշխատի էջմիածնա մեջ տպարան մը հիմնել: Որովհետև իր Զմյուռնիա գտնված միջոցին ծանոթացած և օժանդակած էր Մարկոսի, ուստի կգրե Զմյուռնիո առաջնորդ Ղուկաս վրդ.ի (1765), որ իր թեմին՝ Ամստերդամի մեջ՝ Առաքել Զուղայեցիի շինել տված տառերը, որոնք չէին գործածված մտադրյալ տպարանը բացված չլլալով, առնե և իրեն ղրկե: Հետո կհրամայեր որ Մարկոս իր տպարանովը էջմիածին փոխադրվեր:

Մարկոս իրեն եղած այս հրավերին շնագանդեցավ, «բայց իր համառությունը անպատիժ չմնաց... մտադրած Սաղմոսի տպագրությունը ի գլուխ չկրցավ հանել»²¹: Կկարծվի որ Ղուկաս վրդ. ղադրեցուցած է այդ տպարանը օգտվելով պետությունեն պատրիարքներու և առաջնորդներու տրված իրավասությունեն, որով անոնց իրավունք կտրվեր հսկելու տպագրյալ գիրքերու վրա: Էջմիածնա տպարանը 1771-ին կբացվի, սակայն անհավանական է ենթադրել, թե անոր կազմակերպության մեջ դեր ունեցած ըլլար «Մահտեսի Մարկոս», վասնզի որևէ հիշատակություն չկա այս մասին:

Առանց անոր ալ, սակայն, այս համեստ աշխատավորը, իբր Զմյուռնիո հայոց ազգային մշակույթին հիմնադիրներեն մեկը, իր տեղը ունի հայ տպագրության պատմության մեջ, իբր Իզմիրի տպարանական ապագա գործունեության նախակարապետը:

* * *

Մարկոսի տպարանը փակվելեն հետո, յոթանասուն երկար տարիներ, հայ մամուլը կդադարի գործել և Հոնիականի այդ հարուստ գաղութին մեջ, հակառակ անոր, որ կրթական վերածննդյան շնորհիվ, Իզմիրի հայոց նոր սերունդին մեջ նոր ոգի և նոր կյանք կներարկվեր:

Բայց տակավին դպրոցական նորահաս սերունդը գործոն զեր մը չէր ստանձնած, երբ Իզմիր փոխադրվեցավ, 1833 դեկտեմբերին, միսիոնարական տպարանը, որ 1822 հուլիսին Մալթայի մեջ ամերիկացի միսիոնարները հիմնած էին:

²⁰ Ինչպես կկարծե Միհրան Հովհաննեսյան՝ տես Քննական պատմություն ժԹ դարու հայ դպրության, Փարիզ, 1901, էջ 10:

²¹ Նույն տեղում:

Այս տեղափոխության գլխավոր շարժառիթն այն չէր, որ Իզմիր խոշոր հայություն մը կպարունակեր, կամ հոն բողոքականությունը մեծ առաջադիմություն մը բրած էր, այլ միայն Իզմիրի դիրքն էր, իբր նախադուռ Անատոլիոյ:

Միսիոնարները՝ Իզմիրի մեջ հաստատուելով, դեպի Անատոլիոյ թափանցելու հարմարագույն տեղը բնութարար ըլլալ կարծեցին:

Արդարև միսիոնարական տպարանը 1833-են մինչև 1853՝ քսան տարի գործեց Իզմիրի մեջ, առանց նշանակելի արդյունք մը ունենալու Իզմիրի հայոց կյանքին վրա:

Այս տպարանը միջազգային հաստատություն մըն էր, ուր տասը զանազան լեզուներով դիրքեր կտպելին, արևելքի մեջ ապրող բազմաթիվ ազգերու մեջ միսիոնարներու քարոզությանց նպաստելու համար: Հետևաբար այս հաստատությունը տեղական նշանակություն մը չուներ և բովանդակ արևելքի մեջ տարածված միսիոնարական խմբերու օժանդակն ու նեցուկն էր, ինչպես երբեմն Հռոմի պրուպագանդային Ուրբանիան տպարանը՝ կաթոլիկ քարոզիչներու կգործակողներ իր արտադրություններով:

Ասով հանդերձ բոլորովին աննշմար չէր կրնար մնալ այս տպարանին գործունեությունը, որ լծորդված էր գաղափարներ և մտքեր տարածելու նպատակով հիմնված կազմակերպության մը հետ:

Այս տեսակետով թերևս Իզմիրի հայոց վրա ունեցած ազդեցություն:

Այս տպարանին անդրանիկ տնօրեն եղավ պ. էճրը, որ կերևա թե նախ տրամադիր էր հանչնալու պատրիարքական հակակշիռը իր տպարանին վրա, վասն զի առաջին անգամ իր տպագրած դիրքին վրա կկարդանք. «Քերականութիւն Անգղհիերէն Հայերէն ի պատրիարքութեան Կ. Պօլսոյ Ստեփանոսի արհիեպիսկոպոսի. տպագրեալ յԻզմիր, ի տպարանի Ամերիկացոց. 1835»:

«Արդյոք, — կհարցնե Միհրան Հովհաննեսյան²², — այդ քերականությունը Երուսաղեմի միարաններեն 1824-ի բողոքականութեան հարող Դիոնեսիոս եպ. Կարապետյանի դո՛րծն էր, որ ամուսնանալով Սայտայի մեջ Նարոլիի տերութեան հյուպատոս եղավ, բայց 1833-ին իբր թարգման Իզմիր գնաց...: Եթե այդպէս է՝ խնդիրը ինքնին կմեկնվի. Դիոնեսիոս իր ունակաբար վարժված մեկ սովորության տեղի կուտար և իրավ ալ Ամերիկացոց մինչև տարուն վերջը հրատարակած և ոչ մեկ գրքին վրա օրվան պատրիարքին անունը հիշված է»:

Նույնքան հավանական է ենթադրել, թե տակավին Միացյալ Նահանգներու և Օսմանյան կառավարության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատված չըլլալով, ամերիկացիք պարտավորված էին հոգևոր պետերու իրավասությունը ճանչնալ:

Այս պատճառով էր որ թերևս ամերիկացիք իրենց տպարանական գործունեությունն ի Թուրքիա սկսան դասագիրքերով, և անմիջապես չձեռնարկեցին դավանաբանական հրատարակությանց:

Անգլերենի քերականության հաջորդեց «Նոր կարդալ սկսողներու համար» հեղինակ մը (1836) որուն վրա «ի տպարանի Ամերիկացոց» բացատրության

²² Նույն տեղում, էջ 14:

տեղ կկարդանք «ի տպարանի մարդասիրական ընկերության Ամերիկացոց», 1837-ին «Եղանակ» անուն տարեցույցին վրա՝ «ի գործարանի Ամերիկացոց» տպված կհայտարարվի:

Այս թվականին արդեն երկու պետությանց միջև սկսված էր դիվանագիտական հարաբերություն[ուն] և ամերիկյան քաղաքացիներու իրավունքները ամերիկյան հյուպատոսարանին պաշտպանության տակ ըլլալով Ամերիկյան մարդասիրական ընկերության բարոյական անձնավորության տեղ, անհատապատասխանատուներու անունով հրատարակություններ կատարելը ավելին պատակահարմար դատվեցավ:

Հետևաբար, տպարանին անունը փոխեցին: 1837-ին Հոման Հալլոքի անունով եղան կարգ մը հրատարակություններ: 1838-ին Գուլիէլսոս Կրիֆֆիթ²³ անունին փոխվեցավ, և մի քանի տետրակներ տպվելեն հետո դարձյալ նույն տարվան մեջ՝ Հոման Հալլոքի անունով գործել սկսավ տպարանը: 1840-ին Կրիֆֆիթ կրկին կստանձնե պատասխանատվությունը այս տպարանին, որ մինչև 1852 կգործե Իզմիրի մեջ:

Այս անվանափոխությանց մեջ պատրիարքարանը կամ առաջնորդարանը դեր մը ունենալ կթվին, հավանորեն իր առանձնաշնորհման վրա հիմնվելով. այս տպարանեն լույս տեսնող դավանաբանական գիրքերու և հայ եկեղեցվորդապետությանց հակառակ հրատարակություններու դեմ բողոքներ բարձած ըլլալով:

Թուրքիա՝ Միացյալ Նահանգաց հետ հյուպատոսական և առևտրական դաշինք կնքելեն և 1839 նոյ. 3-ի Թանգիմաթի հրատարակությունեն հետո, ամերիկյան քաղաքացիներու իրավունքները անբռնաբարելի ըլլալով, Կրիֆֆիթ կրցավ այլևս անսանձ գործել և այդ թվականեն սկսյալ լույս կտեսնեն արդեն հայտնապես բողոքականություն բուրող հրատարակություններ²⁴:

Այս տպարաններեն (նախ Հալլոքի և ապա Կրիֆֆիթի) լույս տեսան նաև Թուրքիո մեջ հրատարակվող առաջին բողոքական օրգանը՝ «Շտեմարան պիտանի դիտելյացը», որ 1839 հունվար 1-են մինչև 1846 հուլիս 1, Իզմիրի մեջ տպվեցավ:

Ամերիկյան միսիոնարաց այս տպարանին անմիջապես կհաջորդե երեսունական թվականներու վերջերը՝ Պողոս Թաթիկյանի վիմագրատունը, որ 1840-են առաջ արդեն հիմնված էր: Պողոս Թաթիկյանի կհաջորդե իր եղբայրը Պետրոս, իբր վարիչ այս հաստատության, որ ավելի միջազգային էր, ամեն լեզվե գործեր ընելով: Իզմիրի առևտրական և վաճառականական շարժումը անհրաժեշտ կդարձներ, քաղաքի աշխատությանց համար վիմագրատան տպարանները, որոնք բոլոր միջազգային առևտուրի մեծ կայաններու մեջ, վաճառականության զարգացման աստիճանին հետ կբազմանան: Թաթիկյան հաստատությունը՝ մտավորական ձեռնարկ մը չէր, այլ, լոկ առևտրական անհրաժեշտության մը գոհացում տվող հաստատություն մը, որ ավելի օտար լեզուներով զբաղած է, քան հայերենով:

23 Այսօր Իզմիրի մեջ գոյություն ունի Կրիֆֆիթ անուն ընտանիք մը, որուն անդամները կ'դրադին գորգի վաճառականությամբ:

24 «Ամերիկացոց», «Հալլոքի» և «Կրիֆֆիթի» անուններով գործող այս երեք տպարաններն լույս տեսած գիրքերու և տետրակներու ցուցակը տե՛ս Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 134-135, հսկ ուրո՛ւ կերևա անոնց տիրապետող ոգին:

Այս հաստատության կցված է 1864-ին տպագրական գործերու համար ալ բաժին մը, որ կշարունակվի մինչև հիմա, իրենց քնոողիներուն ձևերով և հայ անվան պատիվ կրերե, Իզմիրի պես համաշխարհային մրցության ասպարեզ դարձած միջավայրի մը մեջ, պատվավորապես մրցելով և զրեթե Իզմիրի ամենեն գործունյա տպարաններեն մեկը հանդիսանալով, իր բազմալեզվյան հրատարակություններով։ Այս գանազան լեզուներու կարգին հայերենն ալ իր փոքրիկ տեղը ունեցած է, որրան որ կներեին միջավայրը և պայմանները։

Իզմիրի մեջ հայերենը մեծ նշանակություն ունեցող լեզու չէ*, ուստի Թաթիկյան առաջնակարգ տպարանին շատ մեծ գործ մը հայթայթելու վիճակին մեջ չէ եղած։ Օտար բազմաթիվ հրատարակությանց կարգին—որոնց ամենեն նշանավորն էր Ոսկանյանի «La Reforme» հանդեսին հրատարակությունը՝ 1869-են սկսալ—այս տպարանեն լույս տեսած են նաև մի քանի «Տեղեկագիրներ» —ասոնք ալ տեսակ մը քաղաքի աշխատություններ— և «Միմոս» անուն զավեշտական հանդեսը (1908 ղեկ. 20), որ երկար կյանք չէ ունեցած։

* * *

1840-են հետո Իզմիրի հայոց մեջ կսկսի նոր շարժում մը։ Միրզա Վահանդեցիի մարգած և դաստիարակած սերունդը այլևս գործոն կյանքի մեջ տեղ մը գրավել սկսած էր։

Իզմիրի հայերը՝ ժամանակի ազդեցության ևնթարկված կխառնվին այն ընդհանուր հոսանքին, որ բոլոր Թուրքիո մեջ կսկսի²⁵։

Բարձրագույն կրթության համար Կ. Պոլսո մեջ կհիմնվին պետական վարժարաններ, որոնցմե ներս քրիստոնյաներու մուտքը կամ արգելված էր կամ՝ սահմանափակված։ Հետևաբար հպատակ քրիստոնյա ազգերն ալ ջանքեր բրին իրենց կարողության չափով մարդիկ հասցնելու և իրենց գրաված տեղը չկորսնցնելու համար։

Հետևաբար դպրոցական գործին տվին մեծ մղում։ Իզմիրի հայերն ալ Կ. Պոլսո հայոց օրինակին հետևելով զարկ տվին իրենց Մեսրոպյան վարժարանին, որ XIX դարուն երկրորդ քառորդին մեջ՝ Անդրեաս Թուրեն Փափազյանի** տեսչության տակ նշանավոր բարձրության մը հասավ։ Այնպես, որ երբեմն նույնիսկ Կ. Պոլսո բարեկեցիկ դասուն պատկանող անձերու զավակներն Իզմիր խրկվեցան այս վարժարանին մեջ ուսում առնելու համար։

²⁵ Տե՛ս «Ընդարձակ օրացույց Ա. Փրկչեան հիւանդանոցի հայոց», 1910, էջ 205, 261, «Հանրային կրթութեան զարգացումը և մտավորական ազդեցութիւնը»։

* Հանգուցյալ պատմարանի այս դիտողությունը չափազանց կտրուկ է Ընդարձակությանն այն է, որ Զմյուռնիայում հայոց լեզուն՝ թե զբարարը և թե մասնավորապես աշխարհարար նկատելի զարգացում է ապրել։ Զմյուռնիայում իրագործված և հրատարակված թարգմանական հարուստ գրականությունը, պարբերականների առատությունը, ազգային դպրոցների առկայությունը և երկարատև գոյությունը դրա անհերքելի ապացույցներն են։ Հիմնականում օտար լեզվով գրերը, պարբերականներ և այլ գործեր հրատարակող հայ մտավորականի հիմնած տպարանը, թվում է, դեռևս նմանօրինակ հետևության հիմք չի տալիս։

** Հայ ազնավոր մանկավարժ Անդրեաս Փափազյանը (1806—1857) 26 աարի անընդմեջ վարել է Մեսրոպյան վարժարանի տնօշի պարտականությունները։

Մենք տեսանք որ Կ. Պոլսո անդրանիկ կրթարանին կից Ենորճ ամիրա տպարան* մը հիմնած էր, որ երկար ատեն զործած էր: Դարձյալ XIX դարուն թանգիմաթի հրատարակութենեն և Սուլթան Մահմուդի կրթական հաստատություններու զարկ տալի հետո, հայոց հիմնած Սկյութարի ճեմարանին կից ամիրաները հաստատած էին նաև տպարան մը:

Իզմիրցիք ալ այս մասին Կ. պոլսեցիներեն ետ շմնացին և իրենց Մեսրոպյան բարեկարգ վարժարանին կից, Թրիեսթ հաստատված իզմիրցի մեծահարուստ Պետրոս Յուսուֆյանի (1773—1846) նվիրատվությամբ, 1840-ին հաստատեցին, Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանը:

Այս հաստատության վրա մեծ խնամք ունեցած է Անդրեաս վարժապետ, իր աշակերտներով, որոնք հոն կսորվեին նաև զրաշարության արվեստը:

Այս տպարանեն առաջին անգամ հրատարակված է Իզմիրի ուսումնական շարժման առաջին առաջնորդ Հովհան քհ. Միրզա Վահանգեցիի «մսկի դար Հայաստանի» անուն գործը:

Ասոր կհաջորդե տեղվույն այն ատենի առաջնորդ և ժամանակին զրագետ եկեղեցականներեն՝ Մատթեոս եպ. Զուխաճյանի (հետո կաթողիկոս) «Խորհրդածութիւնք շնորհաց և նշանաց և խորհրդոց» անուն գործը (1842), ինչպես նաև զրաբար «Տրամաբանություն» մը (Հեղինակ Գոստանդյան**), «Հեգերենի» (1842), «Նարեկի» պես դասագիրքեր և բարոյական շինիչ հրատարակություններ որպիսիք են զրաբար Ֆենեկոնի «Արկածք Արիստոնովսի»՝ Գրիգոր Կոստանդյանի թարգմանությամբ (1843): Դարձյալ հոն տպված է Սավալանյանի «Հարյուր բարոյական առակներ» գործը (1844), Շատոբրիանի «Աթալա» (1843) և «Սենադոս» (René) վեպերը:

1845-ի աղետալի հրդեհեն հետո, որ Իզմիրի հայ տարեգրության մեջ ահավոր անուն մը թողած է, այս տպարանը թեև փրկված այն մեծ ավերումեն, որուն ենթարկվեցան բազմաթիվ հաստատություններ, կկորսնցնե իր նշանակությունը իբր կրթական հաստատության մը օժանդակ, և կդառնա լրագրի մը տպարանը: Ղուկաս Պաթազարյանի հիմնած «Արշալույս Արարատյանի» (1840—1886) տպարանը հոն ճարակ եղած ըլլալով Պաթազարյան վարձեց այս տպարանը և հոն տպել սկսավ իր թերթը: Հավանորեն այս տպարանը հետո ծախվեցավ Պաթազարյանի, որուն «Արշալույսը» այս կերպով կրկին կունենար իր հատուկ տպարանը, ինչպես արդեն ալ նշանակված է թերթին վրա: Պաթազարյան թրքահայոց իբր անդրանիկ լրագրողը՝ կարևոր դեր մը կատարած է: Ըվ ուշագրավ է որ Իզմիր, լրագրական ասպարեզին մեջ, Կ. Պոլսը կանխած է:

Առաջին կանոնավոր լրագիրը, որ Թուրքիո սահմաններուն մեջ հրատարակվի սկսած է 1825-ին, Իզմիրի մեջ Ալեքսանդր Պաքի հիմնած «Սրեթթաթեո տը լ'օրիան» լրագիրն է, որուն հետո ուրիշներ հաջորդած են: Ասոնց վրա ավելցուցեք նաև «Շտեմարանը» որ հայերեն հրատարակություն մըն էր, առանց հայ սրտին խոսելու:

* Ենորճ Լեմիրա անունով է կոչվել Մկրտիչ Ամիրա Միրիճյանը, որի նախաձեռնությամբ 1790-ին կառուցվել է Կ. Պոլսի Մայր-վարժարանը: Նա էլ զպրոցին նվիրել է տառատեսակներ և տպագրական մամուլներ: Այս հարցի և տպարանի պատմության մասին Ա. Ալպոյաճյանը խոսում է աշխատության նախորդ գլխում՝ էջ 263 և հետո:

** Գրիգոր Կոստանյանն այս գրքի ոչ թե հեղինակն է, այլ թարգմանիչը (Ֆրանսերեսից)՝ Դրբի շապիկին և տիտղոսաթերթին հեղինակը չի նշված:

Եվ որովհետև իրապես կրթված սերունդ մը, ազգային ոգով ներշնչված մարդիկ, արդեն հասած էին Իգմիրի մեջ, հետևարար ընդհանուր փափագ մը կար հայ լրագիր մը հիմնելու:

Այս փափագները իրագործելու բախտը վիճակվեցավ Ղուկաս Պալթազարյանի, որ «ազգասեր բարեկամներեն բավական քաջալերություն ընդունելով ըստ ամենայն մասին», ձեռնարկեց «Արշալույս Արարատյանի» հրատարակության:

Լրագրության առաջին օժանդակը մամուլն է: Առանց տպարանի լրագրություն գոյություն չի կրնար ունենալ: Պալթազարյան կերևա թե զուրկ էր նյութական միջոցների, ուստի մեծահարուստ կալվածատեր-վաճառական մը Ստեփան Պալոյան կօժանդակե այս գործին հիմնելով տպարան մը, ուրկի լույս կտեսնա «Արշալույս», 1840 օգոստ. 10-ին: Ստեփան Պալոյանի տպարանը հաստատված էր Տեվրիշ օղլու խանի մեջ և կվայելեր տեսակ մը օտար հովանավորություն, վասնզի Ստեփան Պալոյանի հայրը՝ Գրիգոր Պալոյան, իբր թարգման Անգլիական հյուպատոսարանի, պաշտպանյալն էր այս պետության և մեծ ազդեցություն ուներ այս պատճառով²⁶: Ստեփան Պալոյան լոկ ազգասիրական եռանդով մըն էր, որ տպարանի մը հիմնադիրը կդառնար:

Ղուկաս Պալթազարյան այս եռանդին կօգտվեր 1840-են մինչև 1844 օգոստոս, այս տպարանին մեջ տպելով իր թերթը: Այս թվականին հետո «Արշալույս Արարատյան» կհրատարակվի իր սեփական տպարանին:

«Արշալույս Արարատյանի» տպարանը՝ որ հաստատված էր Իգմիրի Մատամա խանին մեջ, Ղուկաս Պալթազարյանի կուտար իր ձերբագատությունը և գայն ստրուկ ընելն կդադարեցներ՝ զանազաններու քմահաճույքին: Պալթազարյանի անձնական ազատությունը ապահովող այս ձեռնարկին շարժառիթը եղած էր իր և Ստեփան Պալոյանցի միջև առաջ եկած անհամաձայնությունը: Պալթազարյանի «Արշալույսին» մրցակից «Հայրենասեր» անուն թերթ մը կհրատարակեն քանի մը երիտասարդներ: Ասոնցմե մեկն էր Պալոյանցի որդին՝ պ. Պալի Պալոյան: Ասիկա էր ահա այն շարժառիթը, որ տպարանատերը, և «Արշալույսի» «վերատեսուչը» — ինչպես առաջին անգամ կոչած է ինքզինքն Պալթազարյան — դարձուց իրարու անհամաձայն:

«Արշալույս» իր սեփական տպարանին մեջ կհրատարակվի միայն 1844 օգոստոսին մինչև 1845 հունիս, վասնզի նույն թվականին պատահած մեծ հրդեհին բազմաթիվ ուրիշ հաստատություն հետ զոհ կերթան Իգմիրի երեք տպարաններն՝ Մեսրոպյան վարժարանի, Ստեփան Պալոյանի և «Արշալույսի» տպարաններն երկու վերջինները:

Պալթազարյան շրնդհատե՛ր «Արշալույսի» հրատարակությունը և կշարունակե գայն ընդհանուր աղետին փրկված Մեսրոպյան տպարանին, մինչև որ կունենա իր սեփական տպարանը կամ գայն կսեփականացնե:

«Արշալույսի» տպարանին լույս կտեսնա պահ մը նաև «Միություն» հանդեսը (1860—62):

Այս տպարանը իր գոյությունը պահած է մինչև «Արշալույս Արարատյանի» խափանումը (1886):

²⁶ Տե՛ս «Աշխատանք», 1912, թ. 106:

«Արշալույսի» հրատարակության մասին, իզմիր առաջին փորձը կրներ եվրոպական քաղաքակրթության մոտենալու, շնորհիվ իր միջազգային վաճառականության և համաշխարհային հարաբերություններուն:

Դիտելի է, որ իզմիրի այն ատենվան երիտասարդությունը սնած էր վանանդեցիներու և Անդրեաս վարժապետի ազգասիրական և հայրենասիրական ներշնչմամբ:

Ժամանակն ալ հղի էր. զի Արևմուտքի մեջ հեղափոխական նոր խմուռմունք տեղի կունենային և անոնք... հայ ազգին մեջ արձագանք կգտնեին:

Մեսրոպյան վարժարանի գրասեղաններուն վրա իսկ իզմիրցի հայ պատանին կվառվեր ազգին ծառայելու սուրբ սիրովը և առաջին ու դյուրագույն առիթը գտած ըլլար կկարծեր իր գրիչը ի սպաս ղնելով ազգին...

«Արշալույս» մնալով իրր հաստատուն կողմ մը, իր շուրջը սունկի նման ծնան ու մեռան բազմաթիվ թերթեր ու հանդեսներ՝ շատերը արդյունք պատանեկան եռանդի և կուսակցական պայքարի, որ սահմանադրական շարժման պատճառով երբեմն ստացան շատ սուր հանգամանք:

«Արշալույսի» առաջին մրցակիցը կհանդիսանա «Հայրենասեր», որ հրատարակվիլ կսկսի 1843 մայիս 28-ին: Այս թերթը կհրատարակվեր ընկերության մը ձեռամբ որ կազմված էր 1843 մարտ 1-ին՝ զխավորությամբ հաշատուր Հ. Մելիքսելումյանի, Պապի Պապոյանի և Մհ. Գեորգ մհտ. հաշիկյանի: Այս եռանդոտ երիտասարդները իրենց հիմնած լրագրին հատուկ տպարան մըն ալ կհաստատեն և զայն կկոչեն իրենց հիմնած ընկերության անունովը Տպարան Արագածունյաց:

«Հայրենասերի» խմբագրությունը կվարեր հաշ. Հ. Մելիքսելումյանը: Թերթը իր գիրքովը և ձևովը մեկ նմանություն էր Պալթագարյանի «Արշալույսին», որուն մրցակից ըլլալու կմիտեր, առանց սակայն ունենալու անոր ճոխությունը: Մասնավորապես խմբագրին երիտասարդական ավյունով մղած պայքարը պատճառ եղավ, որ այս թերթը վեց ամիս խափանվի, ինչ որ իր ձախողության մեկ գլխավոր պատճառը եղավ:

Արագածունյաց տպարանեն բացի «Հայրենասերեն» (1843 մայիս 28—1846 մայիս 10) լույս կտեսնա նաև Աբել վրդ. Արարատյանի «Համառոտութիւն ազգասիրական սխրագործութեան Տ. Ներսէսի նորրնտիր Հայրապետի» գործը (1843), որ նույն տարվո «Հայրենասերեն» արտատպված էր:

Թերթին դադրելեն հետո տպարանը կերևա թե կմնա խմբագիր՝ Մելիքսելումյանցի, որ զայն կշարունակէ, վասն զի 1847 թվականին հոն տպված կրտեսենք Քրիստոնյա այցելու կամ բացատրություն սուրբ գրքի երևելի մասերուն, անոնց վերաբերյալ աղոթքներով: Աշխատասիրյալ ի վերապատվելի Մ. Ուիլյամ Մովսէս Բաբանյան Անգլիո եպիսկոպոսական եկեղեցվուն: Ի Զրմյունիա, ի տպ. Խ. Հ. Մելիքսելումյանց²⁷:

Այս տպարանը որքան ատեն շարունակված ըլլալը անհայտ է մեզի:

1840-ական թվականներու նորահաս երիտասարդներու այս ձախողությունը, սակայն, չհուսահատեցներ հիսունական թվականներու սերունդը, որ դարձյալ կենտրոն միևնույն ճամբուն մեջ, ալ ավելի եռանդով: Անդրեաս վարժապետի աշակերտները՝ նույնիսկ դպրոցական գրասեղաններեն լրագրող ըլլալու իղձեր ցույց կուտան:

²⁷ Տե՛ս «Նոր մատենագիտություն», էջ 1712:

Այսպէս հիսունական և վաթսունական թվականներուն Իզմիրի հայութիւնը ականատես կրլլա համաշխարհական տպագրութեան պատմութեան մեջ թերեւ չտեսնուած երևոյթի մը: Իսթրոցական պատանիներ, հազիվ կյանքի գարունը ողջունած, իրենց անփորձ գրիչովը, հայրենասիրական նպատակներով ասպարեզ կենտրոնին: Այդ թերթերը կտպեն իրր թե իրենց հատուկ տպարաններուն մեջ, որոնք ուրիշ բաներ չէին եթե ոչ տուններու մեջ կազմուած դպրոցական տղաքներու հասարակ սարքեր:

Այս տպարաններէն՝ որոնք կազմուած էին մուրացած տառերով ու վաճառատանց հատուկ փայտե փոքր մամուլներով, ի լույս կրնծայվեն նույնքան տղու խազալիք, մանրադիտական հանդեսներ՝ Անդրեաս վարժապետի խրախույսներով խանդավառ պատանիներու կողմէ, որոնք բացի այս խեղճ տպագրութեամբ հրատարակութիւններէն կհրատարակէին նաև ձեռագիր թերթեր ևս:

«Երկասերի» (1851) և անոր մրցակից՝ «Թութակ Հայկազյանի»²⁸ տպարանը (1853) կգործէին այսպէս տախտակյա փոքր մամուլներով:

«Հատկանիշիչ հետաքրքրական պարագա, թե՛ «Երկասերի» և թե՛ «Թութակի» դպրոցական խումբը՝ պատանի խմբագիր տպագրիչներ՝ երբ տպագրութեան գործը հաջողութեամբ լմննար—և դժբախտաբար ամեն անգամ չէր պատահեր այս հաջողութիւնը՝ աղտոտ և մերթ անրնթեռնելի տիպի մ'առջև գտնվելով ստեպ ու փորձերը ինչպէս իրիկուն կրկնելու ու կրկնելու դժնդակ շարկին մեջ գտնվելով—ի՛նչ մեծ ու անխառն ուրախութեամբ կիջնէինք տան պարտեզը՝ ընկույզի խաղով պարապելու համար...»²⁹:

Նույն տասնամյակին մեջ այսպիսի հրատարակութիւններ և դպրոցական հանդեսներ—գուցե մեծ մասամբ ձեռագիր էին՝ «Պարտեզ», «Սոխակ Հայաստանի», «Բողոք», և վերջապէս «Աստղ» (1860) որ ձեռագիր հրատարակված է Կոստանդ նաչիկյանի և Հովհաննէս Մսերյանի խմբագրութեամբ:

Հիսունական թվականներու լրագրի այս նմանութիւններուն և անոնց մանկունակ տպարաններուն մեջ, սակայն գտնվեցավ հատ մը, որուն հիմնադիրը հանդիսացավ՝ իր սիրտին մեջ մեծ եռանդ և մտավորական գործունեութեան մը վարիչ ըլլալու գաղափարով առլցուն, քսանամյա պատանի մը՝ Հարութիւն Տետեյան (ծն. 10 մարտ 1832), որ կրցավ իր մյուս ընկերներէն վեր

²⁸ «Թութակ Հայկազյանի» տպարանատեր և հրատարակիչ ցույց տրված է Տ. Վրթանէս անուն քհն. տե՛ս Հ. Գր. վրդ. Ե ա լ ե մ բ և ա Ր յ ա ն. Պատմութիւն հայ լրագրութեան, հատ. Ա, էջ 143), սակայն ասիկա ճիշտ չէ: Եւթմբարյան վրդ. իր տեսած թիվերուն վրա չէ հանդիպած Տ. Վրթանէսի անվան, այլ հիմնված է Մ. Ն. Նորիկյանի մեկ տեղեկութեան վրա (տե՛ս «Մայիս», 1884, թ. 3731), որ պարզ շփոթութեան մը հետեանք է: «Թութակի» խմբագիրը շփոթած է Կ. Պոլսո «Թռչնիկի» խմբագիր Գրիգոր Պալյանի հետ, որ հետո քահանա ձեռնադրվելով Տ. Վրթանէս կոչված է: «Թութակ Հայկազյանը» (1854—1855) Իզմիրի մեջ հրատարակված է, ինչպէս Ե. Լեոնյան ճշտած է տե՛ս «Հայոց պարբերական մամուլը», 1895, Ալեքսանդրապոլ, էջ 561, լրացումներու բաժնին մեջ՝ «աշխատասիրութեամբ երից աշակերտաց Մեսրոպյան վարժապետի» ինչ որ թե՛ ավելի հավանական և թե՛ ավելի տրամաբանական է, նկատի առնելով թերթին բացարձակ տղայական բովանդակութիւնը»:

²⁹ Տե՛ս «Հայ գրականութիւն», Իզմիր, Ա. տարի (1912), թ. 12, Մ և ս ր ո պ ն ու պ ա Ր յ ա ն, Իզմիրի հայ տպագրութեան պատմութիւնը:

* Բնագրում գրված է «Մայիս», պետք է լինի՝ «Մաւիս»:

** Հակառակ նրան, որ «Թութակ Հայկազյան», ինչպէս նաև «Երկասեր» հանդեսներն իրոք ունեցել են «տղայական բովանդակութիւն», նրանցով է սկզբնավորվել հայ մանկական մամուլի պատմութիւնը:

ցարձրանալ և հիմնել 1851-ին տպարան մը, որ միայնակ պիտի բաներ իր յերեսնամյա (1851—1880) բեղմնավոր գործունեությամբ և թարգմանչական գրականության մատուցած ծառայությամբ, Բզմիրի համար ապահովել պատ-
վավոր տեղ մը հայ տպագրության պատմության մեջ:

Հարություն Տետեյան՝ իրեն ժամանակակից պատանիներու նման Մես-
րոպյան վարժարանի մեջ իսկ տպագրության արվեստի համար ցույց տված
էր մեծ սեր ու հակում, թերևս անոր նախնական ծանոթությունները ստանա-
լով Մեսրոպյան վարժարանի տպարանին մեջ:

Տետեյան տպարանի առաջին կորիզը կկարծեմ թե կազմված է Մելիք-
սելումյանի տպարանեն³⁰, սակայն նախ ճոխացած է Վենետիկեն, Վիեննա-
յեն և Պոլսեն բերված տառերով, և հետո Հարությունի՝ անձամբ Ֆրանսայեն
գնած մամուլով և նորաձույլ տառերով:

Հարություն Տետեյանի հիմնարկած գործին օժանդակեցին իր մյուս երկու
եղբայրները՝ Կարապետ և Սարգիս և այսպես Տետեյան եղբարք կրցան տեա-
կան գործ մը հիմնել:

Նախ իրենց ասպարեզին սկզբնավորության իրենք ալ թերթ մը հիմնելու
մարմաջե բռնված էին, և գուցե այդ գաղափարով հաստատած էին իրենց
տպարանը:

Արդարև 1853 հուլիս 1-ին մի քանի ամիսներու պատրաստությունեն հետո
սկսան հրատարակել «Արփի Արարատյան» անուն ամսաթերթը, որուն ամե-
նեն կարևոր մասը կկազմեր եվրոպական թատերգություններու և վեպերու,
ինչպես նաև պատմական գործերու թարգմանությունները, որոնք պրակ առ
պրակ կտպվեին:

Այս թերթը հազիվ կրցավ ապրել մինչև 1855-ի վերջը: Սակայն Տետեյան
եղբարք կերպով մը զայն շարունակեցին, կամ անոր երկրորդ մասը՝ թարգ-
մանությանց բաժինը գերազանցապես ճոխացուցին, իրենց տպարանեն հրա-
տարակելով սովորահատոր թարգմանություններ վեպերու, որոնք ընթերցա-
նության ճաշակը սրեցին, ժողովուրդին հետաքրքրությունը արժարծեցին,
խոսված լեզուն զարգացուցին և աշխարհաբարի ծաղկման ու զարգացման
մեծապես նպաստեցին:

Մեծ տպագրապետը և արևմտյան հայոց ամենամեծ հրատարակիչը 120—
130 կտոր դիրքեր՝ թարգմանություն թե հեղինակություն տպագրած է ազգին
մեջ գրական մեծ շարժում մը առաջ բերելով³¹. «Ի՞նչ հրատարակած թարգմա-
նածո անթիվ վեպերը մեծապես օգնեցին ընթերցասիրությունն արթնացնելու
հայոց մեջ: Բացի Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան տպարաններեն, ոչ
մեկ հայ տպարան այնչափ բազմաթիվ հրատարակություններ ընծայած ունի
ազգին: Եվրոպական ձևով այդ մեծ հրատարակիչը գիտեր լավ կերպով վար-
ձատրել գրական արտադրությունները, որոնցմե կ'օգտվեր ինք ալ: Ափսոս

30 Այս տպարանը Պլտիկ Վեպիր խանն էր: Տետեյանի տպարանն ալ հոն հաստատված
րլլալով կկարծենք թե Տետեյան զայն ձախու առած է:

31 Այս տպարանին շուրջը խտացան Բզմիրի բոլոր հայտնի մտավորականները: Տետեյան
եղբայրներեն զատ՝ Դրիգոր Մսերյան, Մ. Սամուրյան, Մ. Նուպարյան, Գր. Զիլինկիրյան, Սար.
Միրզայան, Գ. Պուպլի, Կոստանդյան այս տպարանի շուրջը հավաքված էին և իրենց ինքնագիր
և թարգմանչական գործերը անոր միջոցով մամուլին կը հանձնեին: Հոն տպված են Մուխիթի
գործերուն գրեթե մեծագույն մասին թարգմանությունը, Հյուսիսի «Թշվառները» (10 հատոր),
և «Նոթը գամ գը Պարի» ինչպես նաև մինչև հիմա մեծ հետաքրքրությամբ կարդացված բազ-

որ Տետեյանի տիպարով տպագրապետ մը ու հրատարակիչ մը վաթսուն տարվան երկար շրջանի մը մեջ չէ ելած տակավին հայոց մեջ»³²։

1860-ական թվականը մանավանդ Իզմիրի մտավոր և ազգային զարգացման ոսկեդարը հանդիսացած է և այդ ժամանակամիջոցին զխավոր գործիչներն է Տետեյան տպարանը, ուրկե՛ր Բացի Բազմաթիվ ու Բազմատեսակ հրատարակություններն՝ յույս տեսած են նաև Հաշտենից րնկերության «Միությունը» (1860—1862), Զիլինկիրյանի «Մաղիկը» (1861—1865), Կարապետ Տետեյանի զավեշտական «Ափեղցփեղը» (1862) և «Դիտակը»* (1862), Սարգիս Փափազյանի «Հավերժահարսը» (1862), Գրիգոր Պարտիզանյանի «Գարուն Հայաստանին» (1862), Գ. Ազճալյանի՝ «Լուսափայլը» (1864—5), Սարգիս Միրզա Վանանդեցիի «Իրավունքը» (1868) և Մատթեոս Մամուրյանի «Արևելյան մամուլը» (1871—1878 և 1879—1883)։

Տետեյան եղբարց տպարանը իր լայն կազմակերպությամբը լիովին գոհացում կուտար պետքերուն և պատանեական եռանդով ասպարեզ նետված խմբագիրներուն, որոնք, առանձին տպարան էլադակերպելու ձանձրոյթն ազատ, եռանդով նետվեցան խմբագրական ասպարեզ և նույնիսկ մասնագիտական թերթեր հրատարակելու փորձ րրին³³։ Հետևաբար երկարատե՛ն Տետեյան տպարանը Իզմիրի բոլոր մտավորական և գրական շարժման կենտրոնը հանդիսացավ։

Յոթնասունական թվականներու վերջերը՝ այդ երբեմնի եռանդը կղաղարի։ Ազգային ինքնագիտակցության զարթնումը, ազգային կյանքի մեջ մտածնոր ձգտումները, երիտասարդության ուշադրությունը այլուր կղարձնեն։ Նոր հասնող սերունդն չունի այն ոգին և ձգտումները որ Անդրեաս վարժապետի ձեռքի տակ պարզված երիտասարդությունը ուներ։

Իսկ երբեմնի եռանդոտ պատանիները այլևս երազելի զաղարած են։ Հետևաբար յոթնասունական թվականներուն Իզմիրի մեջ ավելի հասուն և ավելի ողջմիտ գործունեության մը ականատես իրլանք։

1880-ին Տետեյան կմեռնի և իր տպարանը կփակվի, երբ արդեն Մեսրոպյանի և Մխիթարյանց աշակերտ գրասեր ու գրագետ առևտրական մը՝ Գրիգոր Մսերյան (1846—1893) 1878 հոկտեմբերին, օգտվելով Մատթեոս Մամուրյանի արտոնագրեն, հիմնած էր տպարան մը՝ «Արևելյան մամուլի» անունով։

Իր բուն նպատակն էր հանդեսի մը՝ «Մետեորայի» հրատարակությունը որը հազիվ երկու տարի կրցած է շարունակել (1879—1881)**։

1878 հոկտեմբերեն մինչև 1879 ապրիլ այս տպարանին մեջ կտպագրվի «Արևելյան մամուլը», որուն արտոնագրեն օգտված էր Մսերյան։ 1879 ապրիլ-

մաթիվ վեպեր, ինչպես «Երեք հրացանակիր», «Գաղտնիք Բարիզում», «Ամուրիի մը երազները», «Անիծյալն», «Աշխարհի շրջանը», «Ժողեֆ Պալսամո», «Լուսրեյիա Պորճեա», «Խորհրդավոր կղզի», «Հազար և մեկ գիշեր», «Մաթիլտ», «Մանոն Լեսկո», «Մարիոն Տըլորմի խոստովանալը», «Մոնթե Քրիստո», «Միբրո Մեղաս», «Ռաֆայել», «Վերթեր» և այլն։

³² Տե՛ս «Հայ գրականություն», 1912, թ. 12, Սեսրոպ Նուպարյանի հոդվածը։

³³ «Ափեղցփեղ» և «Դիմակ» երգիծական թերթեր ին, «Հավերժահարս»՝ նորաձևության և նորությի, «Իրավունք»՝ իրավաբանության նվիրված էին։

* Բնագրում (լջ 421) սկզբնապես գրված էր «Դիմակ», որը փոխվել և դարձվել է «Դիտակ» օխտը «Դիմակ» է։

** Գրիգոր Մսերյանի հիմնած գիտական, ազգային և գրական «Մետեորա» պարբերականը յույս է ընծայվել 1880—1881 թթ. և տպարանի լիո մեկսեղ փակվել է համիդյան գրաքննության կողմից։

ին դարձյալ կփոխադրվի Տետեյան տպարանը: Այս առթիվ Մ. Մամուրյան «Արևելյան մամուլի» կողքին վրա կհրատարակե սա շատ նշանակելի ծանուցումը. «Ա. մամուլ տպարան կամ տպագրություն Մ. Մամուրյան անվամբ տպարան կամ տպագրություն առաջժամ դադրած է և հետևապես այս տպարանի անվամբ որևէ հրատարակության պատասխանատու չէ «Ա. մամուլն» կամ Մամուրյան»:

Մ. Մամուրյան՝ իր բարեկամին և ազգականին Գր. Մսերյանի տված աջակցությունը կզլանար և անոր օժանդակելն կդադրեր:

Ասոր պատճառն էր Գր. Մսերյանի՝ Մ. Մամուրյանեն զաղտնի Բոկաչիոյի «Տասնօրյակ»-ն թարգմանել և Մամուրյան տպարանին անունով հրատարակել տված ըլլալը: Ասիկա խորապես վշտացուցած էր Մ. Մամուրյանը, որ իր վստահությունը այսպես շարաշար գործածված տեսնելով կբաժնվի Գր. Մսերյանին³⁴:

Մսերյան 1880-ին իր անվան արտոնագիր ձեռք բերելով կշարունակե տպարանը, մինչև 1884: Այս տպարանեն լույս տեսած են Գր. Մսերյանի քանի մը դասագիրքերն և մանր հեղինակություններն զատ, նաև կարգ մը թարգմանություններ:

1879 ապրիլին Մ. Մամուրյան Գր. Մսերյանի զլանալն հետո իր արտոնագիրը, զայն առանձին օգտագործելու հետամուտ կըլլա: 1883 մայիս 1-ին Մամուրյան տպարանեն առաջին անգամ լույս կտեսնար «Արևելյան մամուլը», որ մինչև 1909 կշարունակվեր կանոնավորաբար, մինչև 1900 հիմնադրին՝ Մատթեոս Մամուրյանի (1830—1901 հունվար 2) խմբագրությամբ և անկե հետո իր որդույն՝ Հրանտ Մամուրյանի տնօրինությամբ:

Մ. Մամուրյան իբր գրագետ անսովոր տիպար մը եղած է Թուրքիո հայոց մեջ, իբր գաղափարի ժիր մշակ մը և ազգային բազմահմուտ ու արդյունավոր գործիչ մը: Այս բեղուն միտքը շարունակեց Տետեյաններու սկսած գործը, ազգին ընծայելով բազմաթիվ ինքնագիր և թարգմանված գործեր, որոնք մինչև հիմա չեն դադրած իրարու հաջորդող սերունդներու ընթերցանության առաջին գիրքերը ըլլալն: Մամուրյան տպարանը իր հիմնարկությունը մինչև հիմա, հետզհետե ավելի զարգացած է, և այսօր Հայուհիո հայոց այս երիցագույն տպարանը ամենեն ճոխն է:

Հոն այս տպարանը սահմանադրության հռչակված պահուն գրեթե միակ զուտ հայ տպարանն էր Բզմիրի մեջ, ուր խտացան սահմանադրության պատճառած խանդավառության և ոգևորության արտահայտությունները, որոնցմե առաջինը եղավ «Արձագանք» անուն օրաթերթի մը հրատարակությունը՝ Մամուրյան տպարանի, Հրանտ Մամուրյանի տնօրենությամբ և Թոշիկյանի խմբագրությամբ:

1909 օգոստոս 3-են սկսյալ նույն տպարանեն լույս կտեսնա «Դաշինք» օրաթերթը երբեմն Պարթևյանի և հիմա Ավօի խմբագրությամբ, առանց սակայն ունենալու այն հմայքը ու կատարելու այն դերը, որ երբեմն ունեցած էր անսաթերթ կամ կիսամսյա «Արևելյան մամուլը»՝ Մ. Մամուրյանի խմբագրությամբ, և կամ ավելի հնաբույր սակայն պատկառելի «Արշալույս Արարատյանը», որ աշխարհի շորս կողմը տարածված հայերու հետ ունեցած հարաբերությամբ համազգային ուշադրության առարկա դարձուցած էր ինքզինքն:

34 Տե՛ս «Դաշինք», թ. 1112, (3/16 մայիս 1913):

Իզմիրի արդի սերունդին մեջ այլևս չի տեսնվիր այն հայրենանվեր գործունեությունը, որ 1850—1870-ի Իզմիրի երիտասարդության ապահովեց փառքի դափնեկներ և հայ աշխարհիկ զրականության մեջ պատվո տեղ:

Այսօր Իզմիրի հայ երիտասարդության մեջ, թողեք զրագետներ՝ գեթ զրասերներ ալ չեն տեսնվիր, բացի մի քանի մատի վրա համրված բացառություններ:

Մ. Մամուրյան որդի՝ «Դաշինքի» հրատարակությունը իսկ սոսկ տեղական ուժերով շարունակելու անկարող ոչ-իզմիրցի խմբագիրներու դիմում կ'ընեն:

Նախորդ ռեժիմի մեջ, զրաքննությունը այնքան խիստ չէր զավառներու մեջ որքան Կ. Պոլսո մեջ, հետևաբար կարգ մը ազգային խնդիրները հուշելու համար, «Արևելյան մամուլը» կհանդիսանար բաց դուռ մը և միանգամայն կդառնար հետաքրքրության առարկա մը:

Այս պարագայեն խրախուսյալ, Բարսեղ Քեշիշյան կփորձե հիմնելու օրաթերթ մը, և կհաջողի ձեռք բերել արտոնագիր՝ հրատարակելու «Արշալույս» անուն օրաթերթ մը, որ կսկսի 1907 հոկտեմբերի 20/2 նոյեմբերի և կշարունակե մինչև 1908 օգոստոս 13/26:

Այս առթիվ իր տպարանը կօժտվի հայերեն գիրերով, որոնք հետո գործածվեցան այլ և այլ հրատարակությանց՝ սահմանադրության հռչակումեն հետո: Մինչև հիմա շարունակվող «Աշխատանքեն» ու «Հայ զրականությունեն» զատ, հոն տպված են սահմանադրության հռչակումեն անմիջապես հետո մի քանի սակավակիւս թերթեր, ինչպես «Միմոս», «Մունետիկ», «Փեթակ», նաև մի քանի կանոնադիրներ, ընկերությանց տեղեկագիրներ, և կարգ մը ուրիշ գործեր:

Տպարանին հիմնադիրը երբ մեռավ, այս հաստատությունը փոխանցվեցավ եղբորը՝ Տ. Քեշիշյանի, որ գայն կշարունակե հրատարակելով թե՛ թուրքերեն և թե՛ հայերեն գործեր:

Հայ տառեր ունենալեն օգտվելով՝ Օսմանի թուրք տպարանը, «Հայ ընթերցատան տեղեկագիրը» տպած է և այլ այս տեսակ գործեր տպագրելու կարող է:

Իսկ ավելի նոր հաստատություն մըն է՝ Շեքերյան տպարանը ուրկե հրատարակված է «Իզմիրի» պատկերազարդ հանդեսը և «Միմոսին» շարունակությունը եղող «Հտպիտ» երգիծաթերթը:

ТИПОГРАФИИ ИЗМИРА

АРШАК АЛПОЯДЖЯН

(Р е з ю м е)

Известный армянский историк Аршак Алпояджян (1879—1962) оставил обширный рукописный труд «Искусство печатания и армяне», хранящийся в Музее литературы и искусства Министерства культуры Армянской ССР. Публикуемая статья является последней, одиннадцатой главой этого труда. В ней на основании богатого фактического материала излагается история возникновения и деятельности армянских типографий в Измире (Смирне) в период с 1759 г. по 1913 г. Автор одновременно рассматривает ряд вопросов культурно-общественной жизни армянской колонии в Измире.

Статья подготовлена к печати М. Н. Акопяном.